



Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասիրության դոկտոր, պրոֆ.

ՀԱՅՈՑ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ*

Վարքերն ու վկայաբանությունները միջնադարյան հայ մատենագրության սիրված տեսակներից են՝ իրենց որոշակի կաղապարներով և տիպաբանությամբ, դեպքերի ու դեմքերի բնութագրման, գործողության և սյուժեի զարգացման միասնական սկզբունքներով, որոնք, կարծես, կանխորոշում են հերոսի կյանքի գալիք ճանապարհը՝ վերջինիս տարբեր հանգրվաններում նրան սպասվող փորձությունների ու պատահարների խորհուրդը:

Հայ իրականության մեջ լայն տարածում գտած վարքերի նյութը նախ և առաջ, ու առավելապես, Հին ու Նոր կտակարանների՝ արտաքուստ դիցաբանական շղարշով պարուրված հերոսներն են, իսկ այնուհետև՝ Նազովրեցի Հիսուսի, նրա մեծավորների, ավագ ու կրտսեր աշակերտների ու հետևորդների խոսվածքային կյանքի դրվագները, քրիստոնեական եկեղեցու կողմից համընդհանուր ճանաչման արժանացած սրբերի ապրած տառապանքների ու հրաշագործությունների նկարագրությունները, ու դրանց հետևանքներն են հայ հողի վրա, հավատի ու հայրենիքի թշնամիների և օտար զավթիչների դեմ, հանուն ազատ գոյատևման մղված կռիվների բովում իմաստնացած ու առնականացած պետական ու եկեղեցական ականավոր գործիչների և գրչի ու սրի մարդկանց անհողդողդ կամքն ու սխրանքները՝ վաղընջական ժամանակներից մինչև 10-րդ դարը կամ Գրիգոր Նարեկացու ժամանակները: Որքան մեզ հայտնի է, հետագա դարերի հայտնի դեմքերից և պարզ ծագումով անհատներից սրբերի շարքն են դասվել քչերը միայն. հրոչակավորներից՝ Ներսես Շնորհալին, Հովհաննես Որոտնեցին և Գրիգոր ու Մովսես Տաթևացիները, սուսական մահկանացուներից՝ Գոհարինյան եղբայրները, որոնք նահատակվել են Սեբաստիայում, 1155 թվականի հուլիսի 28-ին և սրբացել:

Վկայաբանությունների նյութն, ընդհանրապես, հասարակ մարդկանց կյանքին ու գործերին է առնչվում: Տիրող սավորները, ինչպես Վարդանանց

* Ընթերցվել է Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողովում (Երևան), Գեղարվեստական գրականության մասնաճյուղի 1986 թ. սեպտեմբերի 16-ի նիստում:

նահատակները, որոնք մինչև 10-րդ դարը բավականաչափ շատ էին, հետագա ժամանակների տարեգրություններում համարյա չեն հանդիպում, որովհետև նրանց ծնող դասերն ու դասակարգերն աստիճանաբար անհետանում էին մայր հայրենիքից, իսկ դա պայմանավորված էր հայ պետականության վերացումով և նոր իրադրություններով՝ եկեղեցու միջոցով միավորվող հայության և Հայաստանը զավթած մահմեդական բռնակալների փոխհարաբերություններով, որոնք արդեն այլ բնույթ ու ընթացք ունեին:

Վկայաբանությունների բովանդակությունից ելնելով՝ դրանք հանուն հավատի ու համոզումի գոհված անձանց կյանքի պատմություններ են՝ դարձյալ որոշակի կադապարներով, միայն թե անպաճույճ ոճով շարահյուսված: Առաջին շրջանի, այսինքն՝ մինչև 10-րդ դարի վկայաբանությունների հերոսները, համարյա բոլորը, դասվել են ազգային եկեղեցու սրբերի շարքը, և հայ առաքելական եկեղեցու օրացույցը (տոնացույցը) նրանց հիշատակը հավերժացնելու համար հատուկ օրեր է սահմանել, որ տոնվում են ամեն տարի: Հետագա դարերի վկաների ապրած դառնությունների ու ողբերգական վախճանի միապաղաղ և մեծ մասամբ համառոտ պատմությունները թեպետև մի որոշ չափով արդեն համախմբված են «Հայսմավուրք» կոչվող ժողովածուների մեջ, իսկ մասամբ էլ ցրված՝ պատմագեղարվեստական երկասիրությունների և վկայաբանական նյութերի հավաքածուների էջերում, բայց նրանք, այդ վկաները, պաշտոնական ճանաչում չեն ստացել: Նրանց առավելապես ընդունում ու հիշում է հասարակ ժողովուրդը, հավատում նրանց անյունների հրաշագործ զորությանը, գրեթե մինչև օրս, երկյուղածությամբ ուխտի է գնում նրանց նահատակության վայրերն ու շիրիմներին, երկրպագում ու մոմ վառում, իրենց ցավերին ճար խնդրում:

Դաժան փորձությունների բովով անցած, համոզումի ու անկոտրուն կամքի այդ իսկական ասպետների, շատ դեպքերում՝ գրին անհաղորդ, բայց և սուր մտքի ու ազնիվ հոգու տեր, իրենց բարի անվան ու ազգային դիմագծի անաղարտ պահպանության մասին հոգացող և դրա համար կյանքով հատուցող այդ ողբերգական կերպարների վկայաբանությունները ճանաչողական մեծ նշանակություն ունեն և, կարծես, լուսարձակում են հայ ժողովրդի ներքին կյանքի մութ ծալքերը, ըմբռնելի դարձնում մեր ազգային բնավորության և հոգեբանության էական կողմերը:

Մեր հետագա խոսքը այդօրինակ գրական հուշարձանների հետազոտության վիճակին և ցայդ ձեռք բերած արդյունքների գնահատմանն է վերաբերելու:

Բայց մինչ այդ՝ մատենագիտական-աղբյուրագիտական մի համառոտ տեսություն:

Հորինվելով ազգային մատենագրության սկզբնավորման տարիներից՝ մասնավորապես վկայաբանությունները հարատևել են մինչև ներկա հայրաքաղաքի առաջին տասնամյակները՝ նոր ձևափոխման ենթարկվելով գրայնության կարգերի և եղեռնի օրերի բյուրավոր և անանուն նահատակների տառապանքները ոգող նորօրյա պատումների մեջ:

Ժանրի ձևափոխման այս ողին տեսական ընդհանրացման համար հարուստ կովաններ պարունակելով հանդերձ՝ առ այսօր պատշաճ ուսումնասիրության նյութ չի դարձել:

Հին վարքերի ու վկայաբանությունների հավաքման ու հրատարակման բնագավառում ամենից արդյունավետ աշխատել են նախ և առաջ Մխիթար-

յան գիտնականներ Մ. Չամչյանը, Մ. Ավգերյանը, Ղ. Ինճիճյանը և Ղ. Ալիշանը, պոլսահայ գիտնականներից՝ Գ. Փեշտիմալճյանն ու Մատթեոս վարդապետը (Իզմիրլյան), իսկ արևելահայ իրականության մեջ համանուն խրդիրներով սկզբներում զբաղվում էր ականավոր հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանը (1860—1918), և ապա, վերջինիս խորհրդով՝ Հ. Մանանդյանը և Հ. Աճառյանը:

Միքայել Չամչյանն առաջինն էր, որ միջնադարյան Հայաստանի բազմակնճիռ պատմությունը շարահյուսելիս՝ ժողովրդի քաղաքական և եկեղեցական պատմության լուսաբանման համար օգտագործել է վկայաբանական մեծ ու փոքր բնագրեր, որքանով որ դրանք մատչելի էին 18-րդ դարի հայագիտությանը: Մ. Ավգերյանի պրպտումներն ավելի տևական էին, արդյունքները՝ առավել շոշափելի: Իր ամբարած նյութերը նա հրապարակ է հանել 19-րդ դարու սկզբներին, նախ միհատորյա «Ծաղիկ վարուց սրբոց, զորս տօնէ եկեղեցի Հայաստանեայց» (1800) և ապա՝ «Վարք սրբոց լիակատար» տասներկու հատորից բաղկացած (1810—1814) ժողովածուների միջոցով, որոնց մեջ, սակայն, վարքերն ու վկայաբանությունները մեջ են բերվում վերապատմված ձևով, հաճախ էլ իր նոր թարգմանություններով: Այդ պատճառով նվազում է Ավգերյանի տիտանական աշխատասիրության գիտական արժեքը: Ղ. Ինճիճյանը հրատարակել է վարքագրական նյութերի մի ժողովածու, որն ունեցել է բազում արտատպություններ («Վարք սրբոց», 1832, 1861, 1896 և այլն) և գիտական-բնագրագիտական արժեքի տեսակետից նույնպես տկար է: Փեշտիմալճյանն ու Իզմիրլյանը փաստորեն ընթերցողին են հանձնել տակավին 14-րդ դարի սկզբներին Կիլիկյան Հայաստանում Տեր Իսրայելի կազմած Հայսմավուրքը՝ անհարկի միջամտություններով և վրիպակներով (1834): Եվ դրա բազում ապացույցները շատ տասնամյակներ առաջ պարզել է մեծ հայագետ Նիկողայոս Ադոնցը և հրապարակ հանել իր ուսերեն ու ֆրանսերեն աշխատություններում:

Լուրջն ու մնայունն, այսպիսով, Ալիշանի հրատարակություններն են: Հայագիտությունը նրան է պարտական ազգային եկեղեցու սրբերի վարքերի ու վկայաբանությունների բնագրերի ըստ ամենայնի խնամված՝ առաջին գիտական հրատարակությունը երկու հատորով (1874) և «Սուիերք Հայկականք» մատենաշարը նույն ժանրի արձակ պատումների անհայտ տարբերակներով: Այդ շարքի 24 գրքույկներից 22-ը Ալիշանի աշխատասիրության արդյունքներն են և լույս են տեսել 1853, 1854 և 1861 թվականներին, սուրբ Ղազարի հայոց տպարանում: Վկայաբանական նյութերն առատորեն օգտագործված են նաև Ալիշանի կոթողային աշխատություններում («Այրարատ», «Սիսական», «Սիսվան», «Հայապատում» և այլն):

Հայագիտության այս բնագավառի հետագա առաջընթացը կապված է Գալուստ Տեր-Մկրտչյանի անվան հետ:

Գ. Տեր-Մկրտչյանը ո՛չ միայն հրատարակիչն ու մեկնաբանն է մինչ այդ անձանոթ առանձին վարքերի ու վկայաբանությունների, այլև բնագրագիտական խրթին հարցեր լուծող բազմափորձ բանասեր, վկայաբանությունների գաղափարական բովանդակության և ընդհանուր նպատակաուղղվածության փայլուն բացահայտող:

Ուշադրության կենտրոնում ունենալով գերազանցապես հայ գետնի վրա ստեղծված վկայաբանական երկերը («Գրիգոր Մանանդիհր Ռաժիկ Միհրան տոհմից», «Խոսրով Գանձակեցի», «Հովսեփ Նորաշենցի» և այլն), որոնց հերոսների գործունեությունը ներկայացվել է մահմեդականության

դեմ քրիստոնեության մղած պայքարի խորքի վրա՝ հանուն ազատ մտածողության ու գոյատևման, գիտնականն հանգել է այն եզրակացության, որ այդ կոիվներում ընկած նահատակները քրիստոնեական եկեղեցու սրբեր հռչակվելուց բացի նաև «մեր պատմության ամենափառավոր հերոսներն են», հերոսներ, որոնք «առանց առևտրի մտնելու իրենց խղճի հետ, առանց հրապուրվելու զանազան խոստումներից, հանձն են առնում մահ՝ հաստատ մնալով իրենց համոզումներին», որ և «մարդկային գործերից ամենից բարձրը, ամենից վեհն է...» («Արարատ», 1896, № 12, էջ 590):

Գ. Տեր-Մկրտչյանի խորհուրդներով ու աջակցությամբ է գլուխ բերվել «Հայոց նոր վկաներ» ժողովածուն (աշխատասիրողներ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, 1903), որի մեջ հավաքված են տվյալ ժանրին պատկանող այն բոլոր պատումները, որոնց մեծ մասը վարքերի ու վկայաբանությունների կանոնիկ ժողովածուներից դուրս էր մնացել և կամ հիշատակվել մեկերկու նախադասությամբ:

Գ. Տեր-Մկրտչյանը սեփական օրինակով ցույց տվեց, որ վկայաբանությունների ուսումնասիրությունը հայագիտության առաջնահերթ խնդիրներից է և բնավ կապ չունի ինչպես պահպանողական աշխարհայեցության ու ճգնափորական հրապուրանքների, այնպես էլ ժողովրդի կրոնամոլական ոգու ապացույցները հրապարակ հանելու ձգտման հետ: Այդ գործը հայրենասիրական լուրջ ձեռնարկում է, որովհետև օգնում է ճանաչելու ժողովրդի ներքին կյանքը դարերի հոլովույթի մեջ, կովաններ տալով լուծելու աղբյուրագիտական ու պատմական առեղծվածներ: Օրինակ՝ Խոսրով Գանձակեցու և Հովսեփ Նորաշենցու վկայաբանությունների հետազոտությամբ անվանի բանասերը ոչ միայն գիտական շրջանառության մեջ դրեց Մխիթար Գոշի մինչ այդ անծանոթ ստեղծագործությունները («Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խոստրով» և այլն), այլև ճշտումներ կատարեց Հայաստանի պատմական աշխարհագրության մեջ (Մազազ գավառի և Ծրեշ բլուրի տեղադրության կապակցությամբ):

Գ. Տեր-Մկրտչյանի հետազոտությունները մեզ ուրիշ դասեր էլ են տալիս: Այսպես կոչված՝ պահպանողության և կրոնական ոգու ներքին բովանդակությունը բացահայտելու առումով, որ միշտ չէ, որ ճիշտ են որսացել հետազոտողները և միմյանցից զատել իսկական առումով ետադիմությունն ու կղերամտությունը և քաղաքական հեռատեսությունն ու հայրենասիրությունը:

Նորօրյա իմաստասերները և հանրային մտքի պատմաբանները հանույքով են դիմում պիտակավորման հնարանքին, որ բնավ էլ սուր մտքի հատկանիշ չպիտի դիտվի, այլ՝ ամբարտավանության ու տկարամտության: Եթե հավատանք նրանց, ապա ազգային պահպանողականներին, առանց բացառության, պիտի դասենք գեղջկական ըմբռնումներով միամիտ, իսկ բացառության, պիտի դասենք գեղջկական ըմբռնումներով միամիտ, իսկ առանձին դեպքերում էլ՝ չարամիտ ետադեմների շարքը, որովհետև նրանց մշտական հոգացման առարկան ազգային ոգու և դիմագծի անաղարտության պահպանությունն էր: Իբր թե՛ աչք փակելով առաջադիմության և ժողովրդի տնտեսական և հոգևոր կյանքում նոր ժամանակների ու գաղափարների թելադրանքով երևան եկած դրական տեղաշարժերի հանդեպ, նրանք փաստորեն խանգարել են մեր տնտեսական ու հոգևոր վերելքին: Նման ելակետն, ինչ խոսք, սխալ է ու հակապատմական: Այսպես կոչված պահպանողականներից շատերի բուն մտահոգությունը ազգության մարմնի ամբողջության պահպանությունն էր միասնական հայրենիքի, լեզվի ու եկե-

դեցու կոտորակման պայմաններում: Իսկ երբ կործանված էր ազգային դեմոկրատիայի և պետականության շենքը, վտանգված՝ ազգի ֆիզիկական գոյությունը, և հայության հինավուրց հայրենիքի երկնականարում թևածում ու կոնչում էին գիշակեր անգղները, երբ չարիքը, անօրինականությունը, կոտորածը, օտար տիրապետողների քմահաճ վայրագությունները և այլանդակ վարք ու բարոյական երևույթ էին, իսկ ընդվզումն՝ անգտանելի բան, ամենաանհաշան անհատի կորուստն անգամ ազգի դիմադրողական ուժի նվազում, ազգային միասնության խարխուլում պիտի համարվեր:

Այս պայմաններում են ծնվել նոր վկաները, հերոսական նոր ոգու կրողները:

Հայության ազգային ողբերգության ենթագիտակցական ընկալումն էլ դիմադրողության էր կոչում նոր վկաներին՝ ընդդեմ հայրենի բնաշխարհներիսուծած օտար զավթիչների, արգելակելու համար նրանց սանձազերծած ձուլման ու ոչնչացման քաղաքականությունը:

Հասարակն ու գեղջուկն էլ ունեին իրենց գոյատևման փիլիսոփայությունը, որը թեպետև տեսական վերլուծումների արդյունք չէր, բայց ավելի լավ էր դիմագրավում փորձություններին և ավելի քիչ կամ նվազ կորուստներով բաղձալի նավահանգիստ հասցնում ազգության առաջընթացի նավը ամենակույ փոթորիկների միջով, քան համայնապես ապստամբությունները: Չմոռանանք մի բան էլ: Կրոնական ու դավանաբանական պատկերների համահարթեցումը, խղճի հետ սակարկության մտնելը, կրոնափոխության ճանապարհով առանձնաշնորհումների արժանանալու գայթակղությունը, վտանգի տակ էին դնում ազգային միասնության հարատևությունը և ավելի քան արագացնում կոտորակումն ու փոշիացումը: Հայոց նոր վկաները ներքնապես զգում էին այդ չարիքը և ամեն գնով պաշտպանվում դրա անդետավոր հետևանքներից:

Հայության իրավիճակից և կեցության պայմաններից ելնելով՝ մինչև անգամ դաշնության ու եղբայրության քարոզը տվյալ հանրության մասը կազմող դավանաբանական տարբեր համայնքների միջև նրանք անհիմաստ բարբառանք էին համարում, որովհետև այն չէր նպաստում ազգային միասնության վերականգնմանը, իսկ մահմեդական տիրակալները կացնահարում ու կտրում էին ո՛չ թե միայն հայկական կաղնու առանձին ճյուղերն ու շիվերը, այլև դրանք կտրելուց վերջացնելուց հետո նաև՝ մայր արմատներն ու հաստատուն բունը: Այսպիսին էին Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականության պտուղները և՛ հնում, և՛ անցյալ դարում:

Վերջին հազար և ավելի տարիների ընթացքում գրի առնված վկայաբանական պատումների գլխավոր հերոսները հավատի ու համոզումի, անկոտրուն կամքի ու բարոյական մաքրության տիպարաներ էին և իրենց անձնագոհ սխրանքով ու հաստատամտությամբ հայությանը ոգեկոչում էին ազգային միասնության և անաղարտության պահպանության: Ու հենց սրանով էլ հայ վկայաբանական գրականությունն ազդում էր կյանքի վրա:

Գալուստ Տեր-Մկրտչյանը հայոց հին ու միջնադարյան մատենագրության խնդրո առարկա ժանրերի հետազոտողներից առաջինն էր, որ ճիշտ որսաց վկայաբանությունների գաղափարական բովանդակության այս էական կողմը:

Վկայաբանական պատումների քողը, հարկավ, կրոնասիրությունն է, ազգային եկեղեցու ավանդները սրբությամբ պահպանելու կոչը, բայց էությունը, ոգին՝ անձնագոհ հայրենասիրությունը: Ահա ինչու երկար դարեր

մահմեդականության դեմ հայ ժողովրդի մղած անհավասար ու արյունոտ կռիվներում ընկած, նախանձի, դավաճանության և մութ կրքերի զոհ դարձած նահատակներին Գալուստ Տեր-Մկրտչյանը քրիստոնեական եկեղեցու սրբեր անվանելուց բացի հռչակում էր նաև հայոց պատմության ամենափառավոր հերոսներ, որոնց սխրանքները հետնորդներին տալիս էին ուսանելի դասեր:

Իր հետազոտությունների մեջ Գ. Տեր-Մկրտչյանը երկիցս ուշադրություն է հրավիրել հին վկայաբանությունների մեջ դրսևորված՝ քրիստոնեության գաղափարախոսների գործունեության մեջ երևան եկող անհանդուրժողության ոգու արտահայտությունների վրա նույնպես, վերջինս մասամբ կապելով Թոմարակյանների նկատմամբ հենց սկզբից սկսված հալածանքների հետ: Այնինչ՝ հանդուրժողականությունը, ներողամտության ոգին հայոց եկեղեցու վարդապետության հիմքն էին կազմում: Բայց եկեք պատմական ճշմարտությունը չկոծկենք և վարագույրը փոքր-ինչ բաց անենք...

Թոմարակյան շարժման գործիչներն էլ գաղափարի ու համոզումների նահատակներ էին, բռնության ու հալածանքի զոհեր, միայն թե նրանցից ոչ մեկը վկայաբանությունների հերոսներ չդարձան, և արդարացիորեն ջնջվեց շատերի հիշատակը: Ինչպես նկատում է հայագետը՝ «մտքերը վրդոված էին. մի կողմից՝ ներելի և աններելի միջոցներով պաշտպանվում էր ուղղափառությունը ոչ միայն խոսքով, քարոզությամբ, այլև բռնի ուժով, կախաղանով, խարանով, հրով ու ջրով, մյուս կողմից՝ ամենայն համառությամբ, ամեն նեղությունների և հալածանքների հանձնառությամբ քարոզվում և ծավալվում էր աղանդավոր վարդապետությունը: Պող Այրարատից, Սմբատ, Սարգիս, Ղազար, Թորոս, Արքա, Կյուրեղ, Հակոբոս Եպիսկոպոս, Կուճիկ աբեղա, տիկին Հրանուշ, իշխան Վրվեռ, տիկնայք Ախնի և Կամարա, մի ոմն առասպելախառն տիկին Մարե, մի ուրիշը՝ տիկին Շեթի, և ուրիշ բազմաթիվ անուններ, մնացել են մեզ իբրև այդ աղանդի նշանավոր գործիչների անուններ:

Չնայելով Մագիստրոսի փքոցուռույց խոսքերին և տմարդի հալածանքներին՝ մենք կարծում ենք, — շարունակում է գիտնականը, — որ ոչ թե հալածանքները վերջ դրին այդ աղանդին Հայաստանում, — ինչպես հայտնի է՝ այդ աղանդը շարունակեց յուր գոյությունը մինչև մեր օրերը Խնուսում և Ալեքսանդրապոլի գավառում, — այլ թուրք-թաթարական արշավանքները ծածկեցին իրենց հեղեղի տակ ինչպես ամեն բան, նաև այդ աղանդը, որի հետևողների մեծ մասը իրենց պաշտպան իշխանների հետ տեղափոխվեցին դեպի արևմուտք, Ասորիք, Փոքր Ասիա և մասնավորապես Բուլղարիա: Բուլղարիան դարձավ այդ աղանդի երկրորդ հայրենիքը, ուր և Բոգոմիլ քահանայի անունով աղանդը կոչվեց Բոգոմիլների աղանդ:

Միջին Եվրոպայում՝ Կաթարացիները շարունակեցին նույն աղանդը, իսկ հարավային Ֆրանսիայում՝ Ալբիգացիները (ալբիժուանները): Այս վերջինների պատմությունը հանրաժանոթ է և բոլորից լավ ուսումնասիրված»:

Առավել անսպասելի է գիտնականի հետևությունը.

«Այսպիսով, — գրում է նա, — ռեֆորմացիայի և բոլոր բողոքական-ալետարանական եկեղեցիների բուն նախահայրերը և հիմնադիրները դուրս եկան Հայաստանից: Դրանց պատմության ուսումնասիրությունը անաչառությամբ և առանց մոլեռանդության, անհրաժեշտ է ոչ միայն մեր ուղղափառ հայկական ս. եկեղեցու պատմության», այլև հայ հոգևոր-մտավոր կյանքի

պատմության համար, իբրև վերջինիս «ինքնուրույն արտահայտություն՝ մեծ և նշանավոր իր հետևանքներով»¹:

Թոնոդրակյանների գործունեության հետևանքները, թվում է, միակողմանի է գնահատել Գ. Տեր-Մկրտչյանը, և այդպիսի սխալ թույլ են տվել ուրիշներն էլ՝ դասագրքային ճշմարտություն հռչակելով իրենց մեկնությունը: Հիրավի, թուրք-թաթարական արշավանքները դեպի արևմուտք քշեցին, սրբեցին ու տարան թոնոդրակեցիներին, բայց թոնոդրակյան աղանդավորներն էլ իրենց հերթին խարխուլեցին ազգային միասնությունը, ժողովրդի աչքում վարկաբեկեցին ազգությանն համախմբելու ունակ միակ ուժը՝ եկեղեցին, սնանկ հռչակեցին նրա քարոզած վարդապետական ճշտաբանությունները և այդ ձևով, անուղղակիորեն, դյուրացրին թաթար-մոնղոլների առաջխաղացումը: Ահա՛ ինչու, որքան էլ առաջադիմական լինեին և հակաֆեոդալական բովանդակություն ունենար թոնոդրակյան շարժումը, որքան էլ այն ուղղված լինեին դարաշրջանի իշխող գաղափարախոսության՝ աստվածաբանության դեմ, ըստ էության ծանր էին նրա հետևանքները: Կրկնում ենք՝ վտանգվում էր ազգային միասնությունը, թուլանում հայ ժողովրդի դիմադրողական ուժը ընդդեմ արևելքից եկող նոր զավթիչների: Անհի թագավորության անկումից հետո, Հայաստանն ամայացնող արտագաղթերի տարիներին, պետականության դեկը կորցրած ժողովրդին համախմբող կենտրոնաձիգ գոյությունը և հոգևոր միաթարությունը մնում էր մեկն ու միակը՝ **եկեղեցին**, իսկ կործանել վերջինը և մերժել նրա դավանաբանական սկզբունքները, նշանակում էր **սեփական ձեռքով քանդել ազգային միասնության շենքը**: Արժեք այս խնդիրները քննելիս լինել առավել անկանխակալ:

Գ. Տեր-Մկրտչյանը լուրջ հաջողությունների է հասել նաև մինչև նոր ժամանակները հայագետների համար առեղծվածային մնացած և տակավին V դարու երկրորդ կեսին Աբրահամ Խոստովանողի ձեռքով ասորերենից հայերեն թարգմանված՝ Մարութասի «Վկայք Արևելից» վկայաբանական ժողովածվի հետազոտության և բնագրի վերականգնման հարցերում, մի գրական-թարգմանական հուշարձան, որի բեկորները շատ վաղուց տարրալուծվել էին Ճառընտիրների ու մատենագրական այլ կարգի ժողովածուների մեջ և անճանաչելի դարձել:

Զեռագրական պատառիկների և մատենագրական հնագույն վկայությունների համադրման ճանապարհով Գ. Տեր-Մկրտչյանը ոչ միայն կարողացավ վերականգնել «Վկայք Արևելից»-ի սկզբնական վիճակն ու կառուցվածքը՝ միմյանց մոտ բերելով նրա մասերը, այլև հաստատեց, որ այս ժողովածվի ներածական ճառի մեջ², Մարութասը նկարագրելով պարսից տերության՝ քրիստոնեության դեմ սկսած դաժան հալածանքը IV դարում, անդրադարձել է նաև հայերին ու Հայաստանի վիճակին, ըստ որում՝ Մարութասի արտահայտությունների ու նկարագրությունների զուգահեռները նա հայտնագործում է Փավստոսին վերագրված «Բուզանդարան պատմութիւնք» ժողովածվի մեջ:

Գիտնականն այդ կարևորագույն արդյունքներին հասավ Մարութասի երկի տվյալ գլխի միջնադարյան արտագրությունների մեջ երևան եկած

¹ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Ե., 1979, էջ 219—222:

² Խորագիրը՝ «Վկայութիւն բազմաց սուրբ նահատակաց արևելեայց, որ կատարեցան վասն Բրիտոսի»:

Գ. Տեր-Մկրտչյանը նյութեր էր հավաքում «Վկայք Արևելից»-ի և «Բուզանդարան պատմութեանցի» փոխհարաբերությունների հարցին առանձին աշխատություն նվիրելու, որ չհասցրեց իրագործել:

Բուզանդարանի խմբագրման ժամանակի մասին այս գուգահեռը կարելի էր կոչվան է տալիս, որ, ցավոք, նորօրյա հետազոտողներն անտեսում են: Այն, համեմայն դեպք, 460-ական թվականներից առաջ չէ:

Ինքնին վերցրած՝ հետաքրքրական հարց է նաև «Վկայք Արևելից» ժողովածվի բնագրի վերականգնման և հրատարակության պատմությունը, որ մասամբ պարզվում է Գ. Տեր-Մկրտչյանի և Հ. Տաշյանի փոխանակած նամակներից: Դրանցից մեկը մենք հրատարակել ենք 1974-ին, մյուս երկուսը դեռևս անտիպ են (ստացել ենք Վիեննայի Մխիթարյաններից, բանասեր Խ. Սամվելյանի միջոցով, վերջին տարիներս): Աշխատանքն իրագործվելու էր 1890-ական թթ. կեսերին, երկուսի գործակցությամբ, և լույս էր տեսնելու Վիեննայում. «Այս հրատարակությունը,—գրում էր Գ. Տեր-Մկրտչյանը,—բացի յուր ներքին արժանավորությունից, հուսով եմ, որ շատ բան պարզելու է և մեր դասական գրողներից մի քանիսի վերաբերմամբ (Եղիշե, Գյուտ, Փավստոս և այլն): Թարգմանության լեզվի շքեղությունը, ապահով եմ, որ Դուք ինձնից լավ եք գնահատում» (7 հունվարի 1895): Իսկ երկու ամիս հետո ավելացնում է. «Աբրահամի կենսագրության համար ինձ հարկ եղավ Ղազարով զբաղվել: Այդ կետում կունենանք կարևոր նորություններ, որոնք թեև ուղղակի Աբրահամին չեն վերաբերելու (այլ՝ Ղազարին), բայց շատ կարևոր են: Մինչև առաջիկա աշունք, երբ ողջ մնամ, երևի, կունենանք ուրիշ նորություններ, իսկ եթե չվաճ կլինեմ մյուս աշխարհը, փա՛ռք Աստուծո, դուք երիտասարդ եք և առողջ, գործը գլուխ կհանեք: Համոզված եղեք, որ ձեռքիցս եկածը չեմ խնայիլ այդ հրատարակության համար...» (10 մարտի 1895):

Հայոց դասական մատենագիրների և Աբրահամի առնչություններին վերաբերող այդ նյութերը, որ մինչև 1921 թվականը հայագետ Մ. Տեր-Մովսիսյանի ձեռքին էին, անհետացել են խորհրդավոր հանգամանքներում, վերջինիս ամբողջական դիվանի հետ:

Տրամաբանական է միանգամայն, որ Գ. Տեր-Մկրտչյանը լուկ բառային համընկնումներով ու փոխառություններով չի բավարարվել, այլև խորամուխ է եղել Աբրահամի լեզվական արվեստի գաղտնիքների մեջ, չնայած այդ մասին «թարգմանության լեզվի շքեղություն» արտահայտությունից բացի ուրիշ ոչինչ չենք գտնում նրա թողոններում: Հետևաբար, ավելորդ չպիտի համարվի, եթե այս ուղղությամբ փոքր-ինչ ծավալվենք:

Գ. Տեր-Մկրտչյանի հետքերով ընթացող կամ նրա հետ միաժամանակ գործող հայ բանասերները «Վկայք Արևելիցը» նորիցնոր քննելիս՝ ձեռքբերած արդյունքներն առավելապես ծառայեցրել են կամ բանասիրական-բնագրագիտական խնդիրներ առաջադրելու և լուծելու նպատակներին՝ աչքի առաջ ունենալով հայ հին մատենագրության շահերը և Աբրահամի և այլոց) երկերի լեզվաոճական ընդհանրություններն ու բառային համընկնումները, կամ էլ փորձել են պարզել (հաստատել) հայերեն թարգմանության առնչությունը (հարազատությունը) ասորական սկզբնաղբյուրին: Առաջինն («Կորյուն վարդապետ և թարգմանությունը նորին», 1990) և Մխիթարյան բանասեր Ն. Անդրիկյանը («Արևելյան վկայք», տե՛ս «Բազմավեպ»,

1905, № 6 և 7—8), վերջիններից՝ Ե. Տեր-Մինասյանը («Աբրահամ խոստովանողի «Վկայք Արևելիցը» և նրա ասորական սկզբնատիպը», տպագրված՝ «Բանբեր գիտության և արվեստի ինստիտուտի», գիրք Ա—Բ, 1921/1922):

Բայց «Վկայք Արևելիցի» քննության ու արժեքավորման հայեցակետերի մեջ, մեր կարծիքով, կարևորներից մեկը պիտի լիներ թարգմանության բանաստեղծական լեզվի գեղարվեստական հատկանիշների բացահայտման խնդիրը՝ պարզելու համար նախ, թե արդյո՞ք չափազանցություն չէ հուշարձանի լեզվի մասին հետազոտողների, նրանց մեջ և Գ. Տեր-Մկրտչյանի հայտնած անվերապահ հիացական կարծիքը, իսկ ապա՝ ճշտելու համար, թե իրկանում Աբրահամ ի՞նչ նորություն էր բերում հայ լեզվամշակույթի պատմության մեջ, ինչո՞վ էր հատկապես գրավում Եղիշեին ու մյուսներին, երբ մեկի ասորական բնօրինակի և մյուսների հայերեն երկերի միջև մի ամբողջ դարի անդունդ կար, իսկ նկարագրվող ժամանակների, դեպքերի ու դեմքերի՝ և ո՛չ մի համընկնում: Պիտի խոստովանենք՝ հուշարձանի ուշադիր ընթերցանությունը, նրա և Եղիշեի հերոսական ասքի լեզվական մշակույթի անկանխակալ համադրությունը բերում է նույն եզրակացությանը, ինչին հանգել էր Գ. Տեր-Մկրտչյանը շուրջ մեկ դար առաջ. Աբրահամի թարգմանության լեզուն ճիշտ որ շքեղ է և շատ առումներով կանխում է ինչպես հինգերորդ, այնպես էլ հաջորդ դարերի հայ բանաստեղծական լեզվի մեծ վարպետների նվաճումները: Ուստի մերկապարանոց չկրկալու համար քաղեիք մեկ-երկու փոքրիկ հատված «Վկայք Արևելիցի» սրդեն քանիցս հիշած ներածական ճառից, ուր, ինչպես և Եղիշեի Յոթներորդ եղանակի վերջին էջերում, նկարագրված են արևելքի քրիստոնյա կանանց կրած ահավոր տառապանքներն ու անցած գողգոթան և բռնության կապանքների մեջ ցուցադրած անշեղ հավատարմությունը հայրերի լույս հավատին ու ընտանեկան սրբություններին, կանանց, որոնց անընկճելի ոգու դիմաց անույժ էին ամենադաժան հալածանքներն ու խոշտանգումներն անգամ:

Այդ դրվագներում այլաբանական թեման զարգանում է հակադրությունների միջոցով. թեպետև բռնակալների գործադրած տանջանքի միջոցներն անգործ են դառնում կոտորելու նորք ու փխրուն էակների ոգու ուժը, կամքն ու հավատը, բայց որովհետև խոսքն այնուամենայնիվ կանանց մասին է, ի վերջո, բնականից թույլ նրանց մարմինը չի կարողանում դիմանալ ահավոր խոշտանգումներին, ու մինչ նրանց հոգիները պատրաստվում էին հրաժեշտ տալու այս աշխարհին, խոշտանգված մարմինները, կարծես, թարմանում, երիտասարդանում ու նոր հմայք էին ստանում, ներքին գեղեցկությունը ցուլանում էր դեմքերի վրա՝ յուրաքանչյուրին յուրովի փոխարկելով մարմնական գեղեցկության կատարելության՝ այդ ձևով զարմացնելով ու սարսափեցնելով անհոգի դահիճներին:

Ա. «Տեղացին ի նոսա նետք նախատանաց, և նոցա ինչ ո՛չ կարացին ազդել: Մերկացան ի վերայ նոցա սուրբ թշնամեաց և ո՛չ կարացին սպանանել: Զգեցին ի նոսա տէգս աղտեղի խտողմանցն, և նոքա ո՛չ խոցեցան: Սպառնացաւ նոցա մահ դառնաշունչ, և նոքա ո՛չ զանգիտեցին: Պատեցին Սպառնացաւ նոցա մահ դառնաշունչ, և նոքա ո՛չ զանգիտեցին: Գրգռեաց զնոսա զնոսա մեղք մարմնոյ, և ո՛չ կարացին հաւանեցուցանել: Գրգռեաց զնոսա մոգութիւնն ըստ որկորեայ բարոյիցն ի կերակուրս, և ո՛չ թուլացան: Երկեցուցին զնոսա դատաւորքն մեծասաստ սպառնալեալք, և նոքա ո՛չ դողացին: Զարհուրեցուցին զնոսա իշխանք չարալլուկ տանջանալք, և նոքա ո՛չ խո-

նարհեցան: Մաշեցին զնոսա խաւար բանդիւ և կապանաւք, և ո՛չ վհատեցան միտք նոցա: Փազանացաւ ի վերայ նոցա թագաւորութիւնն չարաշուք հրամանաւ և ո՛չ կարաց պատրել զգարութիւն ոգւոց նոցա: Եհաս առ նոսա դատաւճիռ մահու, և ո՛չ կարաց հատանել զգոյն երեսաց նոցա:

Ո՛վ յաւժարութիւն կամաց, ո՛վ կամակարութիւն ազատութեան, ո՛վ իցէ բունք քան զքեզ, կամ ո՛վ սաստիկ և մեծագար իբրև զքեզ: Ո՛վ իցէ, որ քեզ յաղթեցէ, կամ ո՛վ հնազանդել և նուաճել զքո մեծ յաղթութիւնդ կարացէ, բայց եթէ դու քեզէն քեզ յաղթես և անձամբ զանձն պարտեցես ի պատերազմի քոյոյ հանգստեանցն»:

Բ. «Ո՛վ [երինջք] դասակագէղք, որ սիրեցէք զսպանութիւն սայրասուր սրոյն և մատեալք պատարագ կատարեալ՝ առանց երկմտութեան: Ետուք կաշառ զարիւն պարանոցացդ, զի պահեցի անարատ կուսութիւն ձեր: Ետուք զբաւական զկեանս մարմնաւորս, զի ապրեցուցէք զկեանս ոգւոց ձերոց: Սրբեցէք զանդամս ձեր մկրտութեամբ արեան ձերոյ, զի մարմին արեամբ սպիտականայ, և անարժան լուանալով սևանայ:

Ո՛վ երինջք սուրբք, որ ոչ լծեալք ի լուծ ամուսնութեան, ետուք զպարանոցս ձեր ի վար ահաւոր անդոց սպանութեան, զի մի՛ հնազանդեցին մարմինք ձեր ի գործ երկրի ցաւոց և մեղաց: Խոնարհեցուցէք զվիզս ձեր ընդ լծով սայրասուր սրոյն, զի մի՛ խոնարհեցին անդամք ձեր ընդ լծով ապականիչ ցանկութեանն: Արհամարհեցէք զամաթ արտաքոյ և պսակեցալք, զի մի՛ աղտեղիցիք պղծութեամբ պղծոցն ի սենեակս: Տգեղացուցէք զարտաքին գեղ ձեր յաշս տեսողացն, զի գեղեցկացի ներքին գեղն առաջի ամենագիտին:

Դո՛ւք էք աղաւնիք միամիտք տաճարասունք, զոր վասն փափուկ մտոյն՝ արկին ի վերայ վարմ՝ և կալան որսորդք ապականիչք:

Դո՛ւք էք ծիծեռունք ընտանասունք, որ Ճոռողէիք քաղցրաձայն բարբառով ի տաճարին սրբութեան, և մտին աւձք խարամանիք և հանին յիրաքանչիւր բունոց:

Դո՛ւք էք Ճնճղուկք շինամուտք ձայնակիցք մարդկան, և հասին վարուժնակք ապականիչք՝ ցրուեցին յիրաքանչիւր երամոց»⁶:

Արդեն Ն. Անդրիկյանը «Բազմավեպի» էջերում հրատարակած նյութերում մատնանշել է Աբրահամ Խոստովանողի և Եղիշեի երկերի առանձին դրվագներում հանդիպող մի քանի, հաճախ բառացի, համընկնումներ, ըստ որում՝ փոխ առնողը Եղիշեն է: Մեկ-երկուսի վրա էլ ուշադրություն է հրավիրել Գ. Տեր-Մկրտչյանը «Վկայք Արևելիցի» անձնական տպագիր օրինակի լուսանցքներում արած նշումներում, որոնք քաղվածաբար մեջ են բերված գրքի 1921 թ. հրատարակության Հառաչաբանում (հեղինակ՝ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյան):

Օրինակ՝ «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի Է եղանակի «Խցեք զաշս մարմնոյ վայր մի, և այժմ տեսանէք զյոյսն մեր Քրիստոս» և «Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զցաւս մարմնոյս առ մեծ սէրն Աստուծոյ», արտահայտություններն, ըստ Գ. Տեր-Մկրտչյանի, կախում ունեն Աբրահամի «Վկայութիւն սրբոյն Ծմաւոնի եպիսկոպոսի, որ վկայեաց անթիւ բիրութ յերկիրն Արևելից» վկայաբանության «Խից զաշսդ վայր մի և այժմ տեսանես զյոյսն Քրիստոս» (էջ 139, տող 77—8) և «Փոքր համարիմք զմահդ զոր սպանէքդ ըստ կշռոյ հաւատոցն զոր անիմք առ Աստուած,

⁶ «Աբրահամու Խոստովանողի Վկայք Արևելից», էջ 66—69:

և առ ոչինչ զսպանումնդ ըստ համեմատութեան սիրոյն, զոր անհմբ առ Քրիստոս» (Էջ 134, տող 8—11) հատվածներից, որ, թվում է, անվիճելի է:

Մեկ-երկու համընկնումների վրա էլ գիտնականն ուշադրություն է դարձրել Մ. Գարագաշյանի «Քննական պատմություն Հայոց»-ի լուսանցքներում արած նշումներում: Այս վերջիններից էլ պարզվում է, որ Եղիշեն առավելապես հետևել է Աբրահամ Խոստովանողի գրելաձևին՝ իր շարադրանքի մեջ փոխադրելով նրա նկարագրական արվեստի շունչը: Ուստի անմիջական, բառացի ու տառացի փոխառություններ, բացի վերևում բերված առաջին օրինակից, դժվար է մատնանշել, իսկ հոգեհարազատ տեղիներ՝ որքան ուզեք: Օրինակ՝ Աբրահամ Խոստովանողի «Բթեցան երկաթքն ի հատանել, և նոքա ո՛չ կասեցան ի սիրոյն: Վատեաց սուրն ի կոտորել, և նոքա ոչ թիրեցան ի ճշմարտութենէն: Լքան բազուկք կոտորչացն, և նոքա ոչ յողդողեցան ի հաւատոցն» (Էջ 64, տող 5—8) այլաբանական ու շքեղ արտահայտությունների փոխարեն Եղիշեն ունի համարժեք ու տարողունակ թևավոր խոսքեր. «Սուրբ սպանողացն բթեցան, և նոցա պարանոցքն ո՛չ ձանձրացան. աւարառութ ստացուածոց նոցա աշխատեցան, և աւարն օրքան զօր անեցեալ բազմացաւ» (եղանակ Գ, մոգպետի հիացական խոսքերը քրիստոնեության մասին)⁷:

Երկու քաղվածք էլ մեջ բերենք Աբրահամի մատյանի այլ մասերից՝ նրա թարգմանության լեզվական կատարելության մասին վկայությունները սահմանափակելու համար.

Ա. «Այս քառասուն ամ է, զի պրկեալ կան մկանունք մեր ի գանս, և պարանոցք՝ ի սուր սուսերաց. զի կարկեցոյց զմեզ արդար դատաստանն Աստուծոյ առ ամաւթի մերում, ըստ այնմ, զոր Երեմիա ասէ, թէ՛ Լուռ լիցուք, զի Տէր Աստուած կարկեցոյց զմեզ և արբոյց մեզ ջուր դառնութեան վասն մեղաց մերոց: Սպասեցաք խաղաղութեան, և չիք ուրեք խաղաղութիւն. և ակն կալաք բարեաց, և հեռացան ի մէնջ, և ժամանակի բժշկութեան եղև մեզ տրտմութիւն: Զի էլ առեաւծն յանտառէ մրմռեալ և գազանացեալ ի վերայ սակաւաւոր թուոյ հաւտին, կոտորեաց ի նմանէ որպէս և կամեցաւ, և ցրուեաց կորոյս ըստ ախորժեաց. զխոյս և զմաքիս առ ոտն կոտորէր և զգառինս և զորոջս թունաւոր ճիրանամբք պատառէր: Եւ քանզի այժեացն սկացելոց ոչ մեղանշէր, բազում ոչխարք մարմառոտք վասն ապրելոյ ի նմանէ ի սկացեալ գոյնն փոխեցան:

Ո՛վ ազատութիւն անձնիշխան, որ ներկանէ զանձն ի պէսպէս գոյնս յոր և կամի: Եթէ կամի՝ ի տգեղութիւն, եթէ կամի՝ ի սպիտակս, և եթէ կամի՝

⁷ Եղիշեի վասն վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 177, 186 և 61: Գարագաշյանի Պատմության Դ մասի էջ 146-ում ընդգծված են Եղիշեի «Սուրբ սպանողացն բթեցան» բառերը, իսկ լուսանցքում նշված է՝ Աբրահամ: «Վկայք Արևելից»-ից դրանց զուգահեռները ընտրել ենք մենք:

Բթեցան (բթիլ) հազվագյուտ բառ է և նշանակում է՝ տկարանալ, թուլանալ, գուլնալ: Հնագույն վկայությունները Եղիշեի և Ագաթանգեղոսի մատյաններում են, ըստ որում՝ առաջինը մեր մեջբերած արտահայտությունն է, երկրորդը՝ «Զի մեր սուրբ բթեցան, և նոքա ոչ զարհուրեցան ի մեռանելոյ» (հատված 153, Դիոկղետիանոս կայսեր ենթադրական նամակը Տրդատ թագավորին Հայաստան փախած կույսերի մասին), ու երկուսն էլ, ինչպես պարզ նկատվում է, վկայաբանական դրվագներից են և առնչվում են Աբրահամ Խոստովանողին: Առաջինները տե՛ս նաև՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատոր Ա, Վեներտիկ, 1836, էջ 487, պյուն 2, վերջինը, բնականաբար, չի արձանագրված այնտեղ, որովհետև Աբրահամի երկը Մխիթարյան հեղինակներին դեռ անծանոթ էր:

ի թուխս. այլ գիտասցէ, զի սպիտակն ի փառս և ի պարծանս լինի, իսկ թուխն՝ ի կորանս և յանարգանս»:

Բ. «Ընդ այն ամենայն վիշտս, որ անցին ընդ մեզ, ընդ այն ամենայն չարչարանս, որ եկին ի վերայ մեր, չիք ոք, որ ամաշեաց, և ոչ՝ որ կասեաց ի մեղաց: Զիք ոք, որ զղջացաւ և դարձաւ ի չարեաց: Զիք, որ կագի ընդ ազահութեան, և ոչ՝ որ դատ եղեալ կռուի ընդ ապիրատութեան: Զիք ոք, որ ճնշէ զցասումն, և ոչ՝ որ սաստէ ի կագ և խափանէ: Զիք ոք, որ ցածուցանէ զհակառակութիւն, և ոչ՝ որ մեղմացուցանէ զատելութիւն:

Այլ փոխանակ այսր ամենայնի՝ ապաշխարութիւն նուազեաց, մեղք բազմացան, սէր շիջաւ, և նախանձ բորբոքեցաւ: Խաղաղութիւն ամփոփեցաւ, և թշնամութիւն տարածեցաւ: Տուրք արգելան, ազահութեան սանձք արձակեցան: Անարէնութիւն զարացաւ, և արդարութիւն սպառեցաւ: Ակնառութիւն համարձակեցաւ, և յանդիմանութիւն կարճեցաւ: Մեծատունք ժանիսնոր սրեցին, աղքատք զգող աւագակութիւն ուսան⁸:

Կարելի էր այսպիսի քաղվածքների թիվը տասնապատկել, իսկ այնուհետև մեջ բերել ոճական համապատասխանություններ Եղիշեի կամ Ղազար Փարպեցու երկասիրություններից, բայց ներկա պահին մեր խնդիրն այդ չէ, այլ Աբրահամ Խոստովանողի թարգմանած մատյանի լեզվական արվեստի մասին ճաշակ տալը, որի համար վկայակոչված առաջին ու վերջին հատվածները միանգամայն բավարար են և անհերքելի ապացույցներ Գ. Տեր-Մկրտչյանի իրավացիությանը: Դրանք նաև պարտադրում են մեզ, թեկուզև ցավով ու ամոթով, անդրադառնալու գրական-գիտական առօրյայում խոր արմատներ գցած մի հոռի երևույթի, որ գրեթե անհաղթահարելի է դարձել: Մինչ օտարների արած ու չարածի մասին խոսելիս՝ դառնում ենք անասելիորեն շուայ ու առատաձեռն, բայց հենց որ խոսքը դառնում է հայ գործիչներին, հայոց բառ ու բանի տքնաջան ճախարակողներին, աններելի անտարբերությամբ ենք անցնում նրանց խնկելի հիշատակի և հանճարի վալյատակումների կողքով, չենք մտածում արժանին հատուցելու մեր մտավոր հերկերի սերմնացանների անձին ու վաստակին: Իհարկե, խոսքը նրանց մասին չէ, որոնց անունները պաշտոնական գրանցում են ստացել «Մեծերի ցուցակում»: Այդօրինակ հանիրավի մոռացվածներից է նաև Աբրահամ Խոստովանողն իր «Վկայք Արևելից» գրական-թարգմանական երկասիրությամբ, որը դասական հայերենի ճշանավոր հուշարձաններից է:

Մեր դարավոր հարևանները՝ վրացիները, այդօրինակ հուշարձանները վաղուց իրենց ազգային դպրության հիմնաքարեր են հռչակել, ինչպես, ասենք՝ հայերենից թարգմանված «Շուշանիկի վկայաբանությունը», կամ Էլ ռուսթավցի Շոթայի՝ «պարսկերենից վրացերենի վերածած» «Վագրեմավոր» պոեմը: Թարգմանությունների նկատմամբ ակնածալից վերաբերմունք ունենալու գրականագետները նույնպես, որոնք Վասիլի Անդրեևիչ Ժուկովսկուն հայրենական բանաստեղծական լեզվի մեծագույն վարպետների շարքն են դասել գերազանցապես Արևմուտքի ու Արևելքի գրականություններից կատարած բարձրարվեստ թարգմանությունների համար: Բայց ահա մենք՝ հայերս, որ տակավին միջնադարում թարգմանիչներին նվիրված հատուկ տոն ենք սահմանել, և Հայաստանյայց առաքելական եկեղեցին ամեն տարի, աշնանը, հոկտեմբեր ամսին, հանդիսավորությամբ նշում է այն, միաժամանակ կազմակերպելով ուխտագնացություն դեպի Օջական, որ հանգչում են Մես-

⁸ Աբրահամու Խոստովանողի Վկայք Արևելից, էջ 24—25 և 44—45:

րոպ Մաշտոցի նշխարները (Տօն Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մե-
րոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Բերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփա-
յին, Գրիգորի Նարեկացուն և Ներսիսի Կլայեցուն), քար անտարբերություն
ենք ցուցաբերում մեծատաղանդ թարգմանիչներից շատերի վաստակն ար-
ժեքավորելիս: Թվում է, ժամանակն է, որ հայ բանասիրությունը պատշաճ
հետևություններ աներ և առարկայորեն ցույց տար, թե իրականում ո՞րն է
հայ թարգմանիչներից յուրաքանչյուրի ներդրումը ազգային մշակույթի գան-
ձարան, նրա ծառայությունների ազգային ու յամաշխարհային նշանակու-
թյունը: Ընդհանուր խոսքեր, այդ առումով, հարկավ, ասվել է ու այն էլ շատ,
բայց գիտական լուրջ ու հիմնավոր եզրակացություններ են պետք: Հետե-
վաբար, հասկանալի է միանգամայն, որ Աբրահամ Խոստովանողի մեծ
վաստակը թարգմանական արվեստի բնագավառում, որը հայ գրական լեզ-
վին փառավոր հաղթանակ է ապահովել մեզանից ավելի քան տասնհինգ,
Գրիգոր Նարեկացուց շուրջ հինգ ու կես դար, իսկ Խորենացուց ու Եղի-
շէից տասնամյակներ առաջ, պիտի մնար առանց խղճամիտ գնահատման,
մինչդեռ հատկապես այդ մատյանի ուսումնասիրությունն ազդակ կծառա-
յեր հայտնագործելու մերձեցման նոր եզրեր, գցելու գրական-լեզվական
նոր կամուրջներ վաղ և ուշ միջնադարի հին ու նոր հեղինակների միջև:

Արծրունյաց տան պատմությունից հայտնի է, որ Աբրահամ Խոստո-
վանողի մատյանը սիրված էր մասնավորապես Վասպուրականում, այն էլ
տասներորդ դարում ու Թովմա Արծրունու օրերում: Վերջինիս վկայությամբ՝
Աբրահամը հյուսել էր նաև Վարդանանց հերոսամարտին մասնակցած
Արծրունիների մասին մի համառոտ առք («Եւ պատմի այս ի համառօտու-
թեան Աբրահամու Խոստովանողի», դպր. Բ, գլ. Ա), որը, ցավոք, ցարդ
չի հայտնաբերված և որը նախորդել է Եղիշէին ու Ղազար Փարպեցուն:

Ինչ խոսք, Աբրահամ Խոստովանողի այդ կորած մատյանի լեզուն ու
ոճը հարազատ պիտի լինեին «Վկայք Արևելիցի» և իրենց հետքերը թո-
ղած հետագա հայ մշակույթի վրա, որ, դժբախտաբար, անհնար է այլևս
երևան բերել: Բայց տասներորդ դարում, գոնե, ամբողջական էր և կար-
դացվում ու ձեռքից ձեռք էր անցնում Աբրահամի մյուս, թարգմանական
մատյանը, և վերջինիս ավանդների փոխանցումը այդ ու հաջորդ դարերի
հայ մատենագիրներին միանգամայն հնարավոր է: Ուստի ճշմարտությանը
չենք դավի բնավ, եթե իբրև վարկած առաջադրենք Աբրահամ Խոստովա-
նողի բանաստեղծական լեզվի ավանդների փոխանցման հնարավորությու-
նը Նարեկյան դպրոցի ճարտասան-բանաստեղծներին՝ Արամից մինչև Խոս-
րով Անձևացի, մինչև Անանիա ու Գրիգոր Նարեկացիներ, վերջապես՝
«Վկայք Արևելիցի» ընթերցանությունը Գրիգոր Նարեկացու կողմից, որ
պետք է բազում հոգեպարար պահեր պարգևեր ինչպես դպրոցի մյուս բո-
լոր ներկայացուցիչներին, այնպես էլ իրեն՝ Գրիգոր Նարեկացուն:

Երբ ապացուցվի միանգամայն հավանական ու հնարավոր այս վար-
կածը, այն ժամանակ ավելի պարզ կդառնա ազդեցության այն ոլորտն ու
շառավիղը, որ ունեցել է շքեղաշուք լեզվով հայացված՝ Աբրահամի հոգե-
ցունց մատյանը իր խորախորհուրդ դասերով, հույսի ու հավատի, հաստա-
տականության ու անձնագոհության ուսանելի օրինակներով:

Աբրահամի երկին առնչվող մի անտեսված անդրադարձման մասին
ևս կուզեինք ասել երկու խոսք, մանավանդ, որ այն հատուկ իմաստ ու
նշանակություն ունի, և, ինչպես կարելի է մակաբերել առկա պատառիկից,
հեղինակին գրավողը հուշարձանի գեղարվեստական կողմն է եղել: Դրա-

⁹ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» աշխատասիրողներ՝ Դանիել վարդապետ Շահնազարյան, Անդրեաս ու Սուքիաս վարդապետներ, Հակոբ Սարկավազ և ուրիշներ, հրատարակիչ և խմբագրող՝ Հակոբ Կարենյան, Թիֆլիզ, 1863, էջ 108, 88, 101 և այլն:

Աբրահամի մատյանին առնչվող երկու հատված՝ «Պատմութիւն վարուց սրբայն Շմառնի եպիսկոպոսի» (բնագրի խորագիրը՝ «Վկայութիւն Սրբոյն Շմառնի եպիսկոպոսի, որ վկայեաց անթի բիրութ յերկիրն Արևելից ի Շապհոյ Պարսից արքայից արքայի») և «Ճառ ի վկայսն Արևելից» (անանուն բանասերի աշխատասիրությամբ, հակիրճ առաջաբանով ու ծանոթություններով, իսկ Անանունն իրականում Ղ. Ալիշանն էր), ուշադիր ընթերցանությունը Նալբանդյանին ենթադրությունների աշխարհից իջեցրեց իրական գետնի վրա. խախտվեցին արդեն ձեռք բերած նրա համոզումները, և ծնվեցին նոր երկմտություններ, որոնք ցրելու համար 1865 թ. մարտի 22-ին Նալբանդյանը մի ընդարձակ մամակով դիմում է Վենետիկ, որից, ցավոք, մեզ հասել է միայն մի հատված, այն էլ նախ՝ այլոց արտագրությամբ, իսկ հետո՝ վերջինս էլ, մեջ բերած Ե. Շահագիզի «Միքայել Ղազարյան Նալբանդյանց» գրքում:

Դժվար չէ կոահել բանի իսկությունը հիմնավորապես իմանալ ցանկացող մարդու անհամբերությունը, ինչպիսին Նալբանդյանն էր մամակը գրելու պահին, որը դեռ վերջնական պատասխան չստացած՝ լուրջ տագնապ էր ապրում իր երեկվա պատրանքների խորտակման համար:

Նալբանդյանը մասնավորապես գրում էր.

«Գիտեմ, մամակս շատ ձգվեցավ, և Ձեզ էլ երկար տաղտկություն, բայց կենդանի է Տերը, և կենդանի է անձն Ձեր, թե թողից զՁեզ, մինչև այս վերջին խոսքս էլ չասեմ: «Սոփերաց» 20<-րդ> գրքուկը բովանդակում է Ս. Շմավոնի վարքը և Ներբող ի վկայսն Արևելից: Ազդարարության մեջ ասվում է. «...<ներբող> կամ զՈղբս ի վկայսն Արևելից, որոյ հեղինակ Ասորի անշուշտ» և այլն: Եվ ծանոթությանց մեջ, ծան. 4, այսպես. «Յէջ 25. անուն քաղաքին, որ պակասի ի մերում թարգմանութեան, ի բնագրին Լետան գրի» և այլն: Էջմիածնի Ծառընտիրներից մինի մեջ՝ Հրաշափառ տօնական, գրված 1456-ին, հատված կա այս Ողբից այսպիսի վերնագրով. «Երանելոյն Աբրահամու Խոստովանողի ասացեալ ի վկայսն Արևելից»: Ուրիշ Ծառընտիրների մեջ ևս նույն Ողբի զանազան հատվածները, ցիր և ցան, դարձյալ վերագրվում են Աբրահամու Խոստովանողին: Մինչև ձեր տպածը տեսնելը մենք կարծում էինք, թե այդ հատվածները դուրս են եկած «Արևելեաց» գրքից, որ Թովմա Արծրունի հիշում է պարզապես, այսինքն՝ Արևելեաց գիրքը, բայց վերջը մեջ բերած ձեր բանքը դղրդեցին մեր հավատը, ուստի, եթե անարժան չհամարիք ձեր մամակի մեջ քանի մի տողով ուսուցանել մեր տկարությունը, հաճեցե՛ք:

Ա. Բնագիր ասելով (ծան. 4) ի՞նչ էք հասկանում, ասորերե՞նը. եթե այո՝ և եթե Լետան¹⁰ խոսքն էլ այնտեղից էք առնում, ասել է, թե բնագիր ասորերենը կա ձեր ձեռքում, կամ գեթ ուրիշի մոտ, բայց, վերջապես, ո՛չ անհայտ ձեզ, որովհետև քաղաքի անունը այնտեղից է հիշում ծանոթությունը:

Բ. Լիակատա՞ր է բնագիր ասորերենը, թե՞ նույնպես թերի, և ի՞նչ վերնագիր ունի:

Գ. Ձե՞ կարելի արդյոք ասորերենը հայերենից թարգմանված ենթադրել, եթե իսպառ անընդունելի համարել Ծառընտիրների մեջ այդ բանը Աբրահամին վերագրվելը¹¹:

¹⁰ Տպագրված է՝ Լիտան, ուղղում ենք ըստ «Սոփերքի» (Ի, էջ 158):

¹¹ Ե. Շահագիզ, Միքայել Ղազարյան Նալբանդյան, Մոսկվա, 1897, էջ 153—154:

Հասցեատերը, Ե. Շահագիզի ասելով՝ հայր Աթանագիգեսն է, իսկ այդ անունով ծանոթ միակ Մխիթարյանն այն տարիներին հայր Ա. Ղափտանյանն է (ծնված 1836-ին և կուսակրոն քահանա ձեռնադրված 1859 թ. ապրիլի 24-ին), որը, ինչքան հայտնի է, գրական-բանասիրական աշխատանքներով չի զբաղվել (Մխիթարյան հրատարակությունները լոռում են այդ մասին) և հագիվ թե՛ Մ. Նալբանդյանի հարցասիրությանը բավարարություն տար, եթե միայն 1865-ին Ա. Ղազարի գրավաճառանոցի գործերը նա չէր տնօրինում, հակառակ պարագայում՝ հասցեատերը ուրիշ մեկը պիտի լիներ, թերևս, հենց «Սուփերքի» աշխատասիրող Ղևոնդ Ալիշանը, որի հետ Նալբանդյանն անձամբ ծանոթ էր և որին շատ բարձր էր գնահատում որպես անհատ, քերթող ու գիտնական։ Սրանք տարակուսանքներ են, որ միայն Մխիթարյաններն ու նրանց դիվանը կարող են ցրել, նաև՝ նամակի բնագիրը (եթե պահպանվել է), որովհետև մեր տևական հարցումներից միշտ միևնույն պատասխանն ենք ստացել. Սբ. Ղազարի վանքի դիվանում Մ. Նալբանդյանից նամակներ չկան։

Ստացել է արդյոք Նալբանդյանն այս հարցերի պատասխանը, դժվարանում ենք ասել, սակայն ստանալու դեպքում էլ բովանդակությունը դժվար չէ կոսահել.

ա. Արևելյան վկաների վարքերի բնագիրն իսկապես ասորերեն է, իսկ ճառընտիրներում Աբրահամին վերագրվող հատվածները՝ թարգմանություն, ըստ որում՝ ասորերեն բնագրի խմբագրություններից մեկը լատիներեն կից թարգմանությամբ տպագրվել է տակավին 1748-ին, Հոռմում, նշանավոր արևելագետ Ե. Ասեմանիի աշխատասիրությամբ, որից և օգտվում էին Մխիթարյան բանասերները, նաև՝ Ղ. Ալիշանը, մասնավորապես Շմավոնի վարքի թերի մասերը վերականգնելիս։

բ. Ասորերեն բնագիրն ևս ուներ թերիներ, և հայ թարգմանությունը մեծապես լրացնում էր նրա պակասները։ Այդ վերաբերում է առաջին հերթին Նալբանդյանին հետաքրքրող Ներքողին կամ Ողբին, որի սկիզբը (ամբողջ բնագրի մոտ մեկ-երրորդը) չի պահպանվել, և Աբրահամի թարգմանության օգնությամբ միայն կարելի է այն վերականգնել։

գ. Ասորերեն բնագրի՝ հայերենից թարգմանված լիներու վարկածը, որ ենթադրում էր Նալբանդյանը, որքան էլ գայթակղիչ, այնուամենայնիվ գիտականորեն անապացուցելի է ու անհող։

Վերջացնենք՝ անցյալի հայ բանասիրական գրականության մեջ մեր որոնածը վարքագրական-վկայաբանական հուշարձանների գեղարվեստական յուրահատկությունների բացահայտման փորձերն էին, որոնք այս դեպքում էլ մարմին չեն ստանում։ Պետք էր սպասել շատ տասնամյակներ, մինչև հրապարակ իջներ մեծ հայագետ Մանուկ Աբեղյանը։ Եվ ինչպես այլ, նաև այս դեպքում նա նոր ճանապարհ է բաց անում, հիացնում իր խորաթափանց մտքի փայլատակումներով։

Հայոց բազմադարյան մատենագրության հետազոտողներից Աբեղյանը, ըստ էության, առաջինն է, որ վկայաբանություններն ընկալել է որպես գեղարվեստական գրականության վիպասանական սեռի ուրույն տեսակ և վերջինիս հատկանշական նմուշներն ընդգրկել «Հայոց հին գրականության պատմության» ընդհանուր հյուսվածքի մեջ, այն էլ՝ խորհրդային իշխանության տարիներին և հակակրոնական քարոզչության պայմաններում, ուշադրության կենտրոնում ունենալով ինչպես գաղափարական-կուսակցական ներքին պայքարի և օտար բռնապետության դեմ կրոնա-քաղաքական ան-

գրականության վեպերն են՝ գեղեցիկ արվեստով հորինված: Շուշանիկի պատումի մեջ էլ կան, հարկավ, վկայաբանական ընդհանուր մոտիվներ, ինչպես են՝ աղոթքներ, հերոսի նշանավոր ծագում, մանկական ուսում և բարեկրթություն, չարչարանք, բժշկություն, հանդիսավոր թաղում և այլն: Բայց դրանց մեջ չէ այս պատումի բուն արժեքը, այլ իր թեմայի և արվեստի մեջ»: «Այս վկայաբանությունն իսկապես առաջին և գեղեցիկ վիպակն է կնոջ ազատագրման մասին հայոց գրականության մեջ»¹⁶: Իսկ Վահան Գողթնացու առնչությամբ՝ «Իրական կյանքի պատկերով, հերոսի հոգեբանական ճշտությամբ և բնականությամբ այս փոքրիկ պատմվածքը շատ գրավիչ և ազդու է: Այստեղ, ինչպես ժողովրդական վեպի մեջ, ամեն ինչ հասարակ ոճով պարզվում է միայն սյուժետով և գործողությամբ»¹⁷:

Արեղյանի վերոհիշյալ բացահայտումները խիստ կարևոր են հայոց գրականության սեռերի ու տեսակների զարգացման պատմության հետազոտման համար, իբրև կողմնորոշող դրույթներ, քանի որ վկայաբանություններն ու նրանց հերոսները՝ հավատի, համոզումի ու խղճի այդ ասպետները, հենց այն առողջ սաղմերն էին, որոնցից հետագայում ծլարձակեցին ու վերջնականապես ձևավորվեցին մեր վեպերն ու վիպակները և վերջիններիս հայրենասեր ու գաղափարատիպ հերոսները:

Արեղյանի «Հայոց հին գրականության պատմության» հրապարակումից հետո հայրենի գրականագիտական միտքը երկար ժամանակ դադար առավ՝ հրապարակ չհանելով այդօրինակ և ո՛չ մի նոր աշխատություն: Ընդհակառակը, այն որոշակի նահանջ ապրեց: Տեղաշարժ նկատվեց միայն վերջին տասնամյակներում ու այն էլ այնպիսի հետազոտողների մոտ, որոնք վերադարձ կատարեցին Արեղյանի գծած ճանապարհը: Արժարժվող թեմային առնչվող երկու գիրք է հրատարակվել, որոնք նախապես պաշտպանվել են որպես թեկնածուական ավարտաճառեր: Առաջինը Քնարիկ Տեր-Դավթյանի գիրքն է՝ նվիրված «XI—XV դարերի հայ վարքագրությանը»¹⁸, իսկ երկրորդը՝ Լ. Տեր-Պետրոսյանի «Արրահամ Խոստովանողը և նրա «Վկայք Արևելիցը» (բնագրագիտական հետազոտություն)»: Բայց դրանց վերլուծությունն արդեն մեր նպատակից դուրս է:

¹⁶ Նույն տեղում, էջ 353, 354:

¹⁷ Նույն տեղում, էջ 462:

¹⁸ Բացի նույնանուն մենագրությունից (1980), Ք. Տեր-Դավթյանը ուսերեն թարգմանությամբ հրապարակ է հանել «Памятники армянской агиографии» (Выпуск I, Е., 1973) ժողովածուն (Մատենադարանի հրատ.), որի ուղիղ կեսը հատկացված է վկայաբանություններին՝ օգտագործելով «Սուփերք հայկական» (հ. Թ, ԺԳ, ԺԹ) և «Հայոց նոր վկայակ» հեղինակավոր հրատարակությունների բնագրերը, անհրաժեշտության դեպքում, հարկավ, ըստ ձեռագրերի կատարելով առանձին սրբագրումներ: Թարգմանված են՝ Ոսկյանց, Սուքիասյանց, Աստմյանց, Շուշանիկի, Վահան Գողթնացու, Խոսրով Գանձակեցու, Հովսեփ Դվնեցու և այլոց վկայաբանությունները, ընդամենը 11 երկ, յուրաքանչյուրին կցելով ներածական ակնարկ ու ծանոթագրություններ, իսկ ժողովածուին՝ ընդհանուր նախաբան:

ՀԱՎԵԼՎԱԾ

գ. ՏԵՐ-ՄԿՐՏՅԱՆԻ ԵՎ Հ. ՏԱՇՅԱՆԻ ՆԱԽԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
«ՎԿԱՅՔ ԱՐԵՎԵԼԻՑ» ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾՈՒՐՋ

Սույն ուսումնասիրության մեջ արդեն խոսել ենք երկու մեծ հայագետների մտադրության մասին՝ համատեղ ջանքերով պատրաստելու և լույս աշխարհ հանելու Արքայապետականության թարգմանած «Վկայք Արևելից» գրական հուշարձանը՝ հայոց ձեռագրերում պահպանված բոլոր հատվածների ու պատառիկների ընդգրկմամբ և բնագրային տարբերությունների ու այլընթերցումների մանրամասն հաշվառմամբ, կցելով հատորին հանգամանալից ուսումնասիրություն և հետագա ժամանակներում, այլոց կողմից, վկայաբանական նույն մատյանից կատարված նոր թարգմանությունների բնագրերը, որոնք նույնպես գրավել էին հայագետների ուշադրությունը:

Ծրագրված աշխատանքը մեզ անհայտ պատճառով մնաց անկատար: Գ. Տեր-Մկրտչյանը կարողացավ միայն իր ուժերով իրականացրածը էջմիածնում տպագրության հանձնել, որը շարվեց ներկա դարասկզբին, սրբագրվեց, բայց պատրաստի մամուլները լույս աշխարհի չհանվեցին, որովհետև ուսումնասիրության ավարտը ձգձգվում էր, մինչև որ հեղինակն ինքն էլ վախճանվեց, իսկ արդեն գրված մասերն ու ատաղձները անհետացան: Համենայնդեպս, ներկայումս Մաշտոցյան մատենադարանում պահվող նրա թողոններում դրանք բացակայում են, թեպետ 1920—1921-ին անկորուստ գտնվում էին Մեսրոպ Եպիսկոպոսի ձեռքին, որը «Վկայք Արևելիցի» բնագրերի մասը (այսինքն՝ վաղուց տպագրված մամուլները) լույս ընծայեց առանձին գրքով՝ իր կողմից ավելացնելով մի հառաջարան, ուր օգտագործված են հիշյալ նյութերը:

Բայց Մեսրոպ եպիսկոպոսին անձամբ է մնացել երկու հայագետների մտադրությունը: Այսպիսով՝ այժմ այդ մեծ ձեռնարկման առաջին փուլի մասին հավաստի տվյալներ կարելի է քաղել միմիայն հայագետների փոխանակած նամակներից, որոնցից պահպանվել են ընդամենը 3-ը. մեկը, Տաշյանինը՝ Մատենադարանում, իսկ մյուս երկուսը, Գ. Տեր-Մկրտչյանի գրածները՝ Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տաշյանի նամակն անցյալներում օգտագործել ենք մեր հրապարակումներից մեկում («Լրաբեր», 1974, № 1, էջ 79—81), իսկ Գ. Տեր-Մկրտչյանինը լույս են տեսնում առաջին անգամ ու, թերևս, առիթ ծառայեն կորած նյութերի հայտնաբերման համար, որ հայագիտության համար իսկական տոն կլինի:

᠓. ᠘

1. Գ. ՏԵՐ-ՄԿՐՏՅԱՆԸ Է. ՏԱՇՅԱՆԻՆ

7 հունվարի 1895, Էջմիածին

Մեծարգո տեր և հարգելի բարեկամ.

Մեծարգո տեր և հարգելի բարեկամ.
Արդեն մի տարուց ավելի է, ինչ որ հաջողվեց ինձ մեր մատենադարանի երկու մեծ
ճառընտիրներում գտնել Մարութայի (ըստ հայ ձեռ.՝ Եփրեմի) սբանչելի թարգմանությամբ
(Աբրահամ Խոստովանողի) ճառերի գրեթե ամբողջը: «Սոփերքների» Ի հատորի Արևելյան
վկայից ճառը և Շմավոն եպիսկոպոսի վկայաբանությունը, անշուշտ, Ձեզ քաջածանոթ են:
Այժմ ունիմ ես այդ վերոհիշյալ երկու երկաթագիր ճառընտիրների (ըստ իմ որոշման՝ ԺԳ
դարու) և «Սոփերքի» Ի հատորի մանրամասն բաղդատությամբ «Ի վկայսն Արևելից» մեծ
ճառը ամբողջ («Սոփերքը», ինչպես գիտեք, ունի պակասներ սկզբից, միջում և վերջում),
Շմավոնի վկայաբանությունը, Մելես եպիսկոպոսի վկայաբանությունը նույն ընտիր թարգ-

մանությամբ և հետևյալ վերնագրով. «Վկայություն Մելեւի եպիսկոպոսի և Աբրահամա երիցու և Սինեի սարկաւագի ի սկզբանէ հալածանաց մերոց.— Ճառերից թէպէտ և ո՛չ իմ բաւական, պատմեցից թէպէտ և ո՛չ իմ հասու...»: Շմաւոնի քույրերի վկայաբանությունը նույն ընտիր թարգմանությամբ. «Վկայություն քերց Շմաւոնի՝ Թերբուա և քեռն իւրոյ և աղախնոյն»: Բարբաշմենի վկայաբանությունը. «Յամի վեցերորդի հալածանաց մերոց ելին չարախաւսն զԲարբաշմենա եպիսկոպոսէ Սղակա և Տիգրոն քաղաքի առաջի արքայի»:

Վերջապէս՝ մի փոքրիկ, վերջին գլուխ, հետևյալ վերտառությամբ. «Վկայություն վկայցրն, որ սպանան ուրեք ուրեք ի ձեռաց մոգպետացն, թո՛ղ որ ի դրան արքունի կատարեցան»:

Առանց ունենալու Ասեմանու հրատարակությունը, ոչ էլ Արևելյան վկաների ֆրանս. թարգմանությունը և կամ մի այլ թարգմանություն, սակայն հիմնվելով միայն լեզվի վրա, բոլորովին ապահով եմ, որ այս բոլորը միևնույն գրչի՝ Աբրահամ Խոստովանողի թարգմանություններն են, թէպէտ և իմ ճառընտիրներում միասին չեն դրված, այլ դրված են զանազան մասերում:

Կա և մի համառոտ հառաջաբան մեծ ճառի սկիզբը, որի մեջ հիշված են նահատակների անունները: Ինձ թվում է, որ այս հառաջաբանը նույն հնությունը չունի, ինչ որ վկայաբանությանց թարգմանությունը, այլ համեմատաբար նորագույն ժամանակի գործ է:

Այս հառաջաբանում հիշվածներից պակասում է ինձ՝ Շահդուսի վկայությունը.— «Զի և զՇահդուս փոխանակ Շմավոնի կատարեցին սրով Ծ արամբբ ի Ի ապրիելի»: Թե Շահդուսի վկայաբանությունը կար նախնականում, այդ մասին վկայում է և Թ<ովմա> Արծրունին: Ակիփսիմյանց հիշատակությունն չկա այս հառաջաբանում, և ոչ էլ նրանց վկայաբանությունն եմ գտնում իմ ճառընտիրներում: Վեներտի հրատարակությունը, անշուշտ, հին թարգմանությունը չէ, եթե միայն կար հին թարգմանությունը: Հառաջաբանում հիշվում է, վերջապէս, և Յագտադուխտ. «Վկա է Յագտադուխտ, անուանի կին և բարեպաշտ, և այլ կանայք ի Ի մայիս [ամսո]»: Սա, կարծեմ, նույնն է իմ ճառընտիրներում եղած Յեզանդուխտի հետ: Սակայն այս վերջինի վկայաբանության մասին ապահով չեմ, որ Աբրահամ Խոստովանողի թարգմանությունը լինի, թեև ընտիր և հին թարգմանություն: Այս և սրա հետ Մելեւի մի երրորդ թարգմանություն ուրիշ ճառընտիրից կարելի է դնել իբրև հավելված վերևում հիշվածներին: Իմ մտադրությունս էր այս բոլորը հրատարակել էջմիածնում: Սակայն, ինչպէս երևում է, այդ դեռ երկար ժամանակ հաջողվելու չէ: Մյուս կողմից՝ հիվանդ մարդ լինելով, կարող եմ վաղը, մյուս օրը մեռնել, և ո՛վ գիտե, թե իմ թղթերը ի՞նչ վիճակի կենթարկվին: Ուստի մտածեցի դիմել Ձեզ և խնդրել «Հանդիսի» հյուրասիրությանը: Այս բոլորը «Հանդիսում» հրատարակել, ըստ իս, հարմար չէ: Կարելի է նախապէս միմիայն բոլորովին նոր հատվածները լույս ընծայել «Հանդիսում»՝ իմ մի հոդվածով Աբրահամ Խոստովանողի մասին և ապա, արտատպության ժամանակ, դնել ամբողջը: Բաղդատությունը շատ մանրամասն է, դրված են բոլոր ընթերցվածները, նաև՝ լոկ ուղղագրական: Եթե «Հանդիսի» խմբագրությունը հաճի այս իմ առաջարկության, ինձ շատ ցանկալի էր, որ գործի կատարելության համար հանձն առնէիք Դուք ասորական բնագրի հետ բաղդատել և Ձեր հմուտ տեղեկություններով զարդարել հրատարակությունը, անշուշտ, ծանոթությանց և բացատրությանց տակ դնելով Ձեր ստորագրությունը: Այնպէս որ հրատարակությունը կլինի երկուսիս գործակցությունը: Որևէ վարձատրություն չունեմ պահանջելու, և արտատպությունը կլինի «Հանդիսի» սեփականությունը, միայն կհաճիք, անշուշտ, մի քանի օրինակ արտատպությունից ուղարկել ինձ՝ բարեկամներիս և մասնագետներին բաժանելու համար: Խնդրեմ, ինձ շուտափույթ տեղեկացնել, թե արդյոք «Հանդիսի» խմբագրությանը ընդունելի՞ է այս իմ առաջարկը: Չգլանաք նաև Ձեր խորհուրդները գրել ինձ այսպիսի մի կարևոր գործի հաջողության համար: Այս հրատարակությունը, բացի յուր ներքին արժանավորությունից, հուսով եմ, որ շատ բան պարզելու է և մեր դասականության լեզվի շքեղությունը, ապահով եմ, որ Դուք ինձնից լավ եք գնահատելու: Մյուս մանրամասնությանց մասին դեռ կարող եմ թղթակցել, եթե իմ առաջարկությունը ընդունվի:

Հրատարակության չափի մասին գաղափար տալու համար ասեմ, որ Մելեւի, Բարբաշմենի, Թերբուի, Յեզանդուխտի վկայաբանությունները և Վերջաբանը միասին հագիվ լինին Շմավոնի վկայաբանության չափ: Մեծ ճառի նոր գտնված հատվածներն էլ մեծ չեն: Հուսով եմ, որ նախակա կարողանաք վերծանել, գրում եմ մահնում պառկած՝ փոքր-ինչ մրսած լինելով:

Ներփակյալ ուղարկում եմ երկու փոքր հատված Սեկունդոսից՝ Ձեր գերմ<աներեն> հրատարակությանը կարող եմ հարկավորիլ, եթե սակայն ուշ չէ: Երկրորդ հատվածիկը, կարծեմ, Սեկունդոսի վարքի պակաս մասիցն է:

Ընդունեցեք սրտագին բարեկերս և հանեցեք նույնն հաղորդել Հ. Գալեմբարին:

Խ. ծ. Գալուստ Տ. Մկրտչյան

2. Հ. ՏԱՇՅԱՆԸ Գ. ՏԵՐ-ՄԿՐՏՅԱՆԻՆ

Վիեննա, 11 փետրվար, 95

Մեծարգո բարեկամ.

Ձեր 7 հունվարի գրությունն զիս շատ ուրախացուց: Մարութասի վրա արդեն երեք տարի կա, որ շատ աշխատած էի և մեծ պաշար հավաքած համեմատությանց և ուրիշ ծանոթագրությանց, քիչ ատենեն ալ վերջնական բան մը գրել կուգեի (—այս իմաստով էր «Հանդիսի» հունվարի թվույն մեջ Եղիշեի մասին տրված խմբագրական ծանոթությունը—): Մեկ բան կը պակասեր ինձ տակավին. բնագիրը լիակատար չունէի՝ չկրնալով տակավին Փարիզ աչցել, ուր երեք հատոր հսկա Ճառքնտրին մեջ կա. միայն բանի մը հատակտոր ունեի Վենետկեն: Ուստի ապահով կրնաք ըլլալ, որ մեծ սիրով կ'ընդունեմ Ձեր առաջարկը և ի միասին կը կատարենք ամեն բան: Դուք երբ բնագիրը լրացնեք և Ձեր քննությունը գրեք, կրնաք խավրել. ես ալ կը ջանամ ավելցընել Փարիզի ձեռագրին ընտիր ընթերցմունքն՝ համեմատությամբ ասորի բնագրին, և ուրիշ դիտողությունք, թերևս նաև Ձերինին կրնամ կցել Ներածություն մ'ալ իմ կողմանէս. վերջապէս՝ երկուքնուս ալ աշխատությունը կրնա քովերով կենալ և լրացնել գործքը. տպագրության ընտրության մասին կրնաք անհոգ ըլլալ:

Միայն մեկ-երկու բան կա դիտելիք: Ըստ իս՝ լավ չէ, ինչպէս գրած էիք, «Հանդիսի» մեջ դնել գոնե նոր մասերը: Պատճառն հետևյալն է. մենք սկսած ենք քննադատական հրատարակությանց շարք մը՝ մեծադիր և օրինակելի ոճով: Առաջինն է Գաթրոնյանի Խորհրդամատուցքն, որուն մեջ 15 բնագրեն ավելի պիտի գա. ասկէ արդեն 7 թերթ տպված է, մնացածը, կը հուսամ, այս տարի կ'ավարտի: Ավարտած կ'ըլլար շուտով, բայց այժմ ամեն ճգամբք հառաջ կը տարվի մեր ձեռագրաց ցուցակը, որ շատ մեծ հատոր մը պիտի ըլլա և հագիվ նույններին կ'ավարտի: Ուստի անկէ ետքը կրնա կարգը Մարութասի ըլլալ, որ նույնպէս մեծ հատոր մը կ'ելլէ:

Այս վերջին կետը դիտողություն մ'ընել կու տա: Գրած էիք, որ Ձեր գտած մասերը շատ մեծ չեն: Եթե այնպէս է, կարծեմ թե, Էջմիածնի ձեռագիրքը լիակատար պիտի չըլլան: Մեծ Ճառին պակաս մասերը գրեթե հավասար են «Սոփերքի» հրատարակության. թե՛ այս ճառին և թե՛ Շմավոնի, Ազատի և Գոշթաղդի վկայաբանությունն է (—որ անկախ են իրարմէ—) շատ պակասավոր են, դժբախտաբար, ինչպէս ասորին կը ցուցնէ: (—Հոգ չէ, որ Ասսեսմանի չունիք և ո՛չ ալ գաղիերեն թարգմանությունն. կա գերմաներեն ալ. — ասոնք ալ բոլորովին լիակատար չեն. լիակատար է, միայն Ճառին սկիզբը պակսելով՝ Bedjan-ի հրատարակությունն ի Փարիզ, 1891): Որչափ կրցա գտնել՝ Փարիզի ձեռագիրքը, գոնե, Ճառն լիակատար ունի:

Ավելի դժվարին է վկայաբանությանց խնդիրը: Աբրահամու թարգմանությունն շատ հին ժամանակ քայքայած ըլլալու է. Հայսմավորքներու և Ճառքնտրաց մեջ կը թափառին շատ մօ կտորներ, բայց շատ փոխված ու աղաղած, և այն ընտիր լեզուն աղավաղած: Ըստ իս ասոնք ալ պետք չէ մոռնալ հրատարակության մեջ՝ գոնե մանրագիր դնելով իբրև ուրույն խմբագրություն: Մանր թէ Ձեզ, անշուշտ, որ ասոնց մեկ բանի նոր ալ թարգմանություն են (—անշուշտ, հինն դժվարագուտ ըլլալով—) հայր Գագկա և Գրիգոր սարկավագին ձեռքը:— Ձեր հիշած վկայաբանությունքն, ամենն ալ, հնույն կը վերաբերին և Աբրահամու կամ Մարութասա են: Իսկ այն Հառաջաբանն, որ կ'ըսեք, թե լեզուն աղավաղ է՝ կրնա նույնպէս աղավաղյալ խմբագրությանց բախտին արժանացած ըլլալ:

Առաջին ճառը Bedjan-ի հրատարակության Ա հատորին 57—122 ութածալ էջերը կը բռնէ, և այն սկզբան մասը տակավին թերի է՝ սկսելով «Սոփերաց» 95 էջէն: Փարիզի հայ ձեռագիրն այսպէս կը սկսի. «Ձիա՛րդ ժպտեցայց մերձենալ տկարս չարութեամբ և տգէտս գիտութեամբ առ ի պատմել զսքանչելի վկայութիւն վկայիցն սրբոյ» ևն: «Սոփերաց» հրա-

տարակությունը բացի թերի մասերեն՝ շատ անկատար է. տեղ-տեղ մինչև էջի չափ կտրու-
ներ կը պակասին, եթե համեմատենք բնագրին հետ:

Վկայաբանությանց մեջ նախ Շմավոնի Բար-Սարայեի վկայաբանությունը լավ պահ-
ված է համեմատաբար. ապա կը հաջորդեն ըստ ասորի բնագրին՝ 2. Վկայաբանութիւնը
Պուսակայ (թերակատար՝ ի «Սոփերք»), 3. «Պատերազմ մեծ որ եղև ի Խուժաստան»:
4. Վկայաբանութիւն Ազատայ (թերակատար՝ ի «Սոփերք»), էջ 53: «Ազրդա» գրչի սխալ է
փոխ. «Ազատ»): Ասոնք և Գոշթաղդի մասերը շատ աղավաղ և խառնակ են «Սոփերաց»
մեջ: —Ասկե ետքը պիտի գան, ըստ ասորի բնագրին՝ 5. Վկայաբանութիւն Թարբեհի և
ընկերաց, 6. Վկայաբանութիւն Մելեայ եպիսկոպոսին Շօշայ, Աբրոսիմեայ երիցու և Սինէի
սարկաւագին (ձեր հիշածը ճիշտ այս կտորն է), 7. Վկայաբանութիւն Շահդուսի՝ եպիս-
կոպոսին Սղեկայ և Տիգրոնի, և ԾՀԸ ընկերաց, 8. Վկայաբանութիւն Բարշաբեայ և Ժ ըն-
կերաց, 9. Վկայաբանութիւն Ներսէսի եպիսկոպոսի և Յովսէփայ աշակերտին ի Շահար-
բադատայ, 10. Վկայաբանութիւն Դանիէլի և Վարտայ կուսին, 11. Վկայաբանութիւն ՄԺԱ
արանց և Թ կանանց, 12. Վկայաբանութիւն Բարբաշմենայ և ընկերաց (ձեր հիշածը),
13. Վկայաբանութիւն վկայից որ սպանան ուրեք ուրեք են (ձեր հիշածը), 14. Վկայաբա-
նութիւն Յակոբայ երիցու և Մարեմայ հաւատաւորի, 15. Վկայաբանութիւն Թեկդեայ հա-
ւատաւորի և Դ ընկերաց, 16. Վկայաբանութիւն Բարխադբեշաբայ (որդի Կիրակէի) սար-
կաւագի, 17. Վկայաբանութիւն որդոց գերելոց, 18. Վկայաբանութիւն Խ վկայից. Արդէայ,
Արդեշուա, Արդալահայ են, 19. Վկայաբանութիւն Ակեփսիմեայ (Ակերշմայ) և Յովսէփայ
երիցու և Ա.իթալայ սարկաւագի:— Աստեմանի գասոնք կը դնեն բուն գրքին մեջ, և հավել-
վածի մեջ, 20. Վկայաբանութիւն Յովնանու, Բրիքեշուայ, Զեքինեայ, Ղազարու, Մարութայ,
Ներսէսի, Եղիայի, Մակարեայ են: Bedjan ալ ունի ճիշտ նույնքը, բայց մեկ-երկու բան
ավելի, զոր օրինակ՝ Բահնամայ (Վահնամ) վկայաբանությունն, Կարդուգայ, Փեթիոնի,
Անահուայ, Արդորորմզդայ, Սարայ, Պետրոսի են: Զեմ հիշեր «Արեւմտյան» վկայքն, որոնք,
անշուշտ, չկային Աբրահամու «Արեւելեան» վկայից թարգմանության մեջ:

Արդ կըտեսնեք, որ մեծ գործք մըն է, զոր պետք ենք ջանալ ըստ կարելիւն լիա-
կատար ընել (—Bedjan 688 էջ է). ըստ կարելիւն ըսի, վասն զի շատ բան, անշուշտ,
անհետ կորսված է, մաս մ'ալ թափտառած հոս-հոն՝ բայց այլակերպած ու աղավաղյալ.
երբ լավագոյնը չգտնվի, պետք ենք գասոնք ալ առնուլ, բայց ուրիշ տառով դնելով ևն՝
զանազանել ընտիրներեն: Կը հուսամ, որ Էջմիածնի անհուն հավաքման մեջ անկարելի
պիտի չըլլա շատ բան, որ ինձի համար կորսված են, երևան հանել:

Առ այժմ այսքան. դժբախտաբար, այնպես զբաղած եմ Յուդակով, որ Մարութաս և
նմաներ այժմ մեկդի դրած եմ: Բայց երբ Դուր պատշաճ դատեք ձեռագիրնիդ խավրելու՝
ըլլա՝ լոկ քննությունը կամ բնագրեն ալ, կը ջանամ կրցածս ընել: «Հանդիսի» մեջ կրնան
քննութենեն մասեր, թերևս նաև ամբողջը դրվիլ, առանց ասով բուն գրքին վնասելու: —Քիչ
օրեն կը խավրեմ Գաթրճյանի «Խորհրդամատուցեն» թերթ 8—9, երբ տպվին, որպեսզի
գաղափար ունենաք տպագրության ձևին, տառերուն ևն:

Մաղթելով հաջողություն՝ մնամ

Ձերդ Հ. Հ. Տաշյան

<Ե. Գ.> Կը ներեք հապճեպով գրելուս:— Թերևս այս տարվան վերջերը կարենամ
Փարիզ այցելել. 94-ի երկու ամիս Գերմանիա և ի մասնավորի Պերլին էի:

Ն ու յ ն

3. Գ. ՏԵՐ-ՄԿՐՏԶԱՆԸ Հ. ՏԱՇՅԱՆԻՆ

10 մարտի 1895, Էջմիածին

Մեծ <արգո> բարեկամ.

Ձեր պատվական գրությունը շուտուց ստացել եմ, բայց ժամանակ չունեի պատաս-
խանելու: Մի բարեկամի մահ, նաև հաճախ կրկնվող հիվանդությունը արգելք եղան: Հա-
զիվ հազ փոքր-ինչ կազդուրված՝ հարկ եղավ վերջացնել Եփեսիոսի Քրոնիկոնի բաղդա-
տությունը (Ավգ<երյանի> հրատ<արակության> և մեր ձեռագ<րի>), որ հանձն էի
ստել հայտնի Մոմսենի առաջարկությամբ: Բաղդատությունը նոր և ուշադրության արժանի
հետևանքներ տվեց: Այժմ հերթն եկավ Աբրահամ-Մարութասին: Ըստինքյան ինձ հետա-
քրքրում էր միմիայն Աբրահամը կամ, լավ ևս, Մարութայի հին թարգմանության՝ մեզ
հայած հատվածները (արդեն հրատարակված կամ նոր գտնված): Դուր խնդիրը ավելի

ընդարձակ եք դնում՝ առաջարկելով ամբողջ Մարութասն հրատարակել, որչափ որ այդ հնարավոր է, զանազան և հեռավոր դարերի թարգմանություններն ի մի ամփոփելով: Համաձայն եմ Ձեր առաջարկությանը՝ Մարութայի ամբողջությունը թողնելով Ձեր վրա: Իմ զբաղման հատուկ առարկան կլինի Աբրահամն և յուր թարգմանությունները: Նորագույն թարգմանություններից էլ ինչ որ գտնիմ, կուղարկեմ Ձեզ: Այս իսկ նպատակի համար ինձ անհրաժեշտ է ունենալ Մարութայի նորագույն և լրագույն հրատարակությունը, ուստի և խնդրում եմ վաղընդփույթ ուղարկել ինձ Ձեր հիշած Bedjan-ի հրատարակությունը, եթե միայն այդ հրատարակությունը ասորերեն չէ (այլ ֆրանսերեն, լատիներեն ևն): Եթե ասորերեն բնագիրներն են, այն ժամանակ ինձ ավելորդ է, որովհետև կարողանալու չեմ օգտվիլ:

Զմոռանաք ուղարկել ինձ Ձեր «Մատենադարան մանր ուսումնասիրությանց» պակասը: Ունեցածս է մինչև 144 երեսը:

Հ. Զարբանալյանից ես դեռ 1893 թվի նոյեմբերից տեղեկություն ունիմ, որ «Սոփերքի» հրատարակությունից հետո (1853) Վենետիկում ստացվել է մի երկաթագիր ճառընտիր 1807 թվականի. ցանկալի է, որ այդ ճառընտիրն էլ աչքի առաջ ունենայինք բաղդատության համար, եթե միայն այդ հնարավոր է: Այդ ճառընտիրում գտնվում է մեծ ճառը «Զիարդ ժտեցայց» սկզբնավորությամբ (այդ ճառից ես երկու օրինակ ունիմ): Bedjan-ն ստանալուց հետո (դրամն անհապաղ կստանաք դուք կամ ուղարկող զբաղմանը) կուղարկեմ Ձեզ նախ այն բոլոր նորագույն հատվածները, որոնք հին թարգմանության մնացորդն են, Հետո, հետզհետե, «Սոփերքի» և իմ ձեռագրերի բաղդատությունը, ման՝ հատվածներ նորագույն թարգմանություններից: Մարութայի հրատարակությանց և այլնի մասին գրելը Ձեր գործն է լինելու. այդ մասին ես ոչինչ ունիմ ասելիք՝ չունենալով պետք եղած մատենադարանը: Ուրեմն, բացի բնագրի հայտնի մասերից, կզբաղվեմ ես Աբրահամ Խոստովանողով: Ձեր ունեցածն էլ Դուք կավելացնեք: Մնացածը թողնում եմ Ձեր հմտությանը: Աբրահամի կենսագրության համար ինձ հարկ եղավ Ղազարով զբաղվիլ: Այս կետում կունենանք կարևոր նորություններ, որոնք թեև ուղղակի Աբրահամին չեն վերաբերվելու (այլ Ղազարին), բայց շատ կարևոր են: Մինչև առաջիկա աշունը, եթե ողջ մնամ, երևի, կունենանք ուրիշ նորություններ, իսկ եթե չված կլինիմ մյուս աշխարհը, փա՛ռք աստուծո, դուք երիտասարդ եք և առողջ, գործը զյուխ կհանեք: Համոզված եղեք, որ ձեռքիցս եկածը չեմ խնայիլ այդ հրատարակության համար, իսկ Ձեր հմտության և չափազանց աշխատասիրության վրա բոլորովին վստահ եմ:

Ձեր Գալուստ

